



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 18 ՄԱՅԻՍ, 2015

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈՐԹ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՂՄՈՍ 63

ԾԱՐԱԻ ԵՄ ՔԵԶԻ, ՈՎ ՏԷՐ

Ո՛վ Աստուած, իմ Աստուածս, քեզ կը փնտռեն անձկագին,  
հոգիս ծարաւ է քեզի, մարմինս քեզի կը փափաքի՝  
խոպան, ճաթռտած, անջուր մնացած հողի պէս:  
Ուստի սրբարանդ եկայ՝ քեզ տեսնելու,  
զօրութիւնդ եւ փառքդ դիտելու համար:  
Որովհետեւ քու սերդ կեանքէն աւելի կ'արժէ.  
ուստի շրթներս պիտի գովաբանեն քեզ,  
ամբողջ կեանքիս ընթացքին պիտի օրհնաբանեն քեզ,  
եւ ձեռքերս աղօթքով դէպի քեզ բարձրացնեն:  
Հոգիս խնճոյքի մէջ պիտի ըլլայ ու կշտանայ,  
եւ շրթներս ցնծութեան երգերով պիտի օրհներգեն քեզ:  
Երբ կը պառկիմ՝ քեզ կը յիշեն,  
գիշերն ամբողջ՝ քու մասիդ կը մտածեն,  
որովհետեւ օգնական եղար ինձի.  
քու թելերուդ հովանիին տակ ցնծութեամբ կ'երգեն:  
Ես քեզի կապուած կը մնամ,  
եւ քու աջդ կը պահէ գիս:

### ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈՐԹ

*Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատուր Երրորդութիւն, տուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:*

### ԱՂՈՐԹ

*Պահապան ամենայնի Քրիստոս,  
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,  
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,  
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.  
Եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

# ՕՐՈՒՄՆ ՆԻԺԹԸ



ԵԼԻՑ ԻԵ (25) ԳԼՈՒԽ



## ԸՆԾԱՆԵՐ ՍՈՒՐԲ ԽՈՐԱՆԻՆ (25:1-9)

Այս գլուխով մեզի կը ներկայացուի Վկայութեան Խորանին շինութեան կարգադրութիւնները, եւ ըստ այնմ այդ շինութեան համար բերուելիք ընծաները, որոնք պէտք էր ըլլային յօժարակամ: «**Ըսէ Իսրայէլի որդիներուն, որ ինձի ընծայ բերեն. միայն յօժարակամ փուռդ մարդէն առէք իմ ընծաս**» (2 հմր): Հակառակ այն իրողութեան, որ բոլորն ալ վայելեցին Տիրոջ բարիքները, բայց ազգաբնակիցն կը փրուի ըստ այնմ ընծաներ փալու: Որովհետեւ այս ընծաները ո՛չ ազգային եւ ո՛չ ալ պետական փուռք են, որ հարկաւոր ըլլայ բոլորին: Աստուծոյ համար նուէրին մեծութիւնը կամ փոքրութիւնը չէ, այլ նուէրին յօժար սրտէ բխած ըլլալը: Ի միջի այլոց, զարկական գոհը եւս պարտադիր չէ, բայց որովհետեւ ժողովուրդի փրկութեան երաշխիքն էր, ուրեմն ան որ գոհ չէր մասնացանէր, ինքն իր փրկութիւնը մերժած կ'ըլլար:

«**Ինձի սրբարան մը թող շինեն, որպէսզի իրենց մէջ բնակին**» (8 հմր): Ահաւասիկ Տէրը կը թելադրէ որ Իրեն համար սրբարան մը շինեն, որպէսզի իրենց մէջ բնակի: Հեքաբքերական այն է, որ չ'ըսեր անոր մէջ բնակին, այլ իրենց մէջ բնակին: Սա կը նշանակէ, թէպէտ սրբարան պիտի շինէին, բայց Աստուծոյ ներկայութիւնը եւ բնակութիւնը իրենց մէջ ըլլալու: Որպէսզի երբ դուրս գային սրբարանէն Աստուծոյ ներկայութիւնը իրենց հետ ըլլար: Որուն լրումը քեզի պիտի ունենար Բանին մարմնացումով. «**Եւ Բանը մարմինը եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ**» (Յովի 1:14):

«**Խորանին օրինակը եւ անոր բոլոր կարասիներուն օրինակը, բոլոր քեզի ցուցուցածիս պէս, ճիշդ այնպէս շինեցէք**» (9 հմր): Այս արտայայտութիւնը ցոյց կու տայ, թէ Մովսէս իր երեւելայութեամբ կամ ճարտարապետի օգնութեամբ չէ որ պիտի շինէր, այլ Աստուծոյ ցոյց փութած օրինակով: Ուրեմն կը նշանակէ երկնային սրբարանի մը մասին է խօսքը, որուն նաեւ կ'ակնարկէ Եսայի մարգարէն եւ Յայրնութեան գիրքը: Բայց Յայրնութեան գիրքին մէջ փաճար չկար, որովհետեւ Աստուծոյ Ինք իսկ է ճշմարիտ փաճարը: Իսկ Եսայի մարգարէին պիտի ըսէ. «**ինչպիսի փաճար պիտի շինէք որ ես անոր մէջ բնակին**»: Սա կը նշանակէ որ նիւթեղէն սրբարան գոյութիւն չունի երկինքի մէջ, բայց նիւթեղէն ձեւով կ'ուզէ ներկայացնել Մովսէսին, որպէսզի անով սորվին սրբարանը իբրեւ Աստուծոյ ներկայութեան խորհրդանիշը: Ուրեմն, սրբարանը, սրբութեան իսկական հասկացողութիւնը, որ կը նշանակէ աշխարհէն կտրուիլ, անջատուիլ, եւ որոշ արտաքին նշաններով այնպիսի միջավայր մը ստեղծել, որպէսզի անով ժողովուրդը զգայ Աստուծոյ ներկայութիւնը:

Սրբարանէն յետոյ, Աստուծոյ կը թելադրէ որ Ուխտի Տապանակ շինեն, որ դարձեալ կը խորհրդանշէ Աստուծոյ ներկայութիւնը, անոր կափարիչին վրայ երկու քերովբէներով, ցոյց փալու համար թէ Աստուծոյ քերովբէներով շրջապատուած է: Ահա այս Ուխտի Տապանակին մէջ պիտի դրուին վկայութիւնը, այսինքն՝ Տիրոջ կողմէ փրութեամբ քարէ փախարակներու վրայ պարտադրանքները, որոնք Աստուծոյ ներկայութեան վկայութիւնն են: Իսկ Եբրայեցոց նամակին մէջ կ'ըսէ, թէ այդ Ուխտի Տապանակին մէջ նաեւ պիտի դրուէր Ահարոնի ծաղկեալ գաւազանը եւ սափոր մը լեցուն մանանան: Որպէս խորհրդանիշ Քրիստոսի քահանայապետութեան, եւ Քրիստոս որպէս ճշմարիտ երկինքէն իջած հաց:

Աստուծոյ նաեւ կը թելադրէ որ Հացի սեղան շինէ, եւ անոր վրայ առաջաւորութեան հացերը, որոնք թիւով 12 հար էին, խորհրդանշելով Իսրայէլի 12 ցեղերը, որոնք Աստուծոյ ներկայութեան պիտի ըլլային: Այնպէս ինչպէս Աստուծոյ ներկայութիւնը իրենց կեանքին մէջ, նոյնպէս եւ անոնց ներկայութիւնը Աստուծոյ առջեւ:

Ի վերջոյ, Աստուծոյ կը թելադրէ որ ոսկիէ աշտանակ մը ալ շինէ եօթը ճրագներով, որպէսզի ճրագները վառուած ժամանակ լոյսը առջեւէն փայլէ: Այս պարագային այդ լոյսը մէկ այլ ուրիշ արտայայտութեամբ դարձեալ Աստուծոյ ներկայութեան խորհրդանիշն է, որ զիրենք պիտի առաջնորդէ: Մարդը որքան կարիքը ունի լոյսի որպէսզի կարենայ փնտնել եւ ըստ այնմ առաջնորդուիլ: Ահա Աստուծոյ այս ձեւով կ'ուզէ Իր ներկայութիւնը զգալի դարձնել, թէ Ինք որպէս ճշմարիտ լոյս, ու Իր պարտադրանքները որպէս լոյս պիտի առաջնորդեն Իսրայէլի ժողովուրդը:

**ՏԱՊԱՆԱԿ ՈՒԽՏԻՆ, ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՍՈՒՑՈՒԿԸ ՀԱՅԻՆ ՄԵՂԱՆԸ  
ԱՇՏԱՆԱԿԸ (25:10-40)**

